# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

*ՔԹՈՎ ՇՈՒՆՉ ՔԱՇԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ. Բժիշկ Միշէլը* «Independance Belge»*-ում բացատրում է քթով շունչ քաշելու կարևութիւնը ամբողջ կազմուածքի համար։*

*Առաջին՝ քթի խորշերը աւելի շատ օդ կարող են պարունակել քան բերանի խոռոչը։ Երկրորդ՝ բերանով շունչ քաշելիս շնչած օդի որակութիւնն էլ ուրիշ կլինի։*

*Օդը, մտնելով քթի խոռոչը և շփուելով նրա լորձամաշկի հետ, տաքանում է և խոնաւանում։ Քթով շունչ քաշելու առաւելութիւններից մէկն է և վարակիչ հիւանդութիւնների առաջն առնելը։ Նրա մէջ ընկնող փոշին կամ մնում է քթի միջի մազերի վրայ, կամ թէ մտնում է լորձամաշկի մէջ և դուրս է գալիս նրա արտաթորութեան հետ միասին։ Բացի դորանից քթի խորշում կէս ժամ մնալուց յետոյ ամենաւնասակար մանրէն էլ անվնաս է դառնում։*

*Մինչդեռ բերանով շունչ քաշելը, մանաւանդ ցրտին շնչառութեան գործարանները հիւանդանալուն ընդունակ է դարձնում։ Դորանից է առաջ գալիս բրոնխիտ և ուրիշ նման հիւանդութիւններ։*

*Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել երեխաների քթի առողջութեան և քթով կանոնաւոր շնչառութեան վրայ։*

*Նեարդային քայքայումը, որ պատահում է քթի խիտ մազերից, նրանց հեռացնելուց յետոյ անմիջապէս անյայտանում է։*

*Աւելին կասենք, բողազի ծռուելը առհասարակ վատ արիւնին ենք վերագրում, այն ինչ այդ հիւանդութիւնը ունենում են ծանր շնչառութիւն ունեցող երեխաները և երեխայի քթից պոլիպը հեռացնելուց յետոյ հիւանդութիւնը անմիջապէս անյայտանում է։*

*ՔՆԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ. Գ. Դ. Շչերբաչեը ծանուցել է քնելու մի նոր միջոց, որ բժշկականութեան մէջ* Veronal *անունն է կրում։ Գ. Ա. Բոնդիյրեւի Մարողովների անուան կլի-*